ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ, ԿՈՈՐԴԻՆԱՑՄԱՆ ԵՎ ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կուսակցության որոշումները վկայում են այն լուրջ ուշադրության մասին, որ ՍՄԿԿ-ն դարձնում է աշխատավոր մարդու շահերն ու կոմունիստական շինարարության նպատակներն արտահայտող համաժողովրդական իրավունքի պարգացման հարցերին։ Պետական և հասարակական կյանքի իրավական հիմունքներն ամրապնդելու վերաբերյալ կուսակցության որոշումների կենսագործման ուղղությամբ խոշորագույն իրադարձություն էր ՍՍՀՄ նոր սահմանադրության ընդունումը։ Դա սովետական համաժողովրդական պետության հիմնական օրենքն է՝ կարևորագույն քաղաքական փաստաթուղթ և հիմնական իրավաբանական ակտ։ Այդ փաստաթղթի ընդունումը ակնառու կերպով վկայում է այն մասին, որ ՍՄԿԿ-ն, լինելով կառավարող կուսակցություն, հետևողականորեն, գիտականորեն հիմնավորված, դեմոկրատական խոր հիմքերի վրա է որոշում պետական կյանքի հանգուցային հարցերի լուծման քաղաքական ուղեգիծը, նախանշում երկրում օրինականության և իրավակարգի ամրապնդման ուղղությունը։ ՍՍՀՄ սահմանադրությունը ապահովում է սոցիալիստական հասարակական հարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորվածությունը, անհրաժեշտ պայմաններ ստեղծում կոմունիստական ապրելակերպի հետագա զարգացման համար։

ՍՍՀՄ սահմանադրությունը զարգացած սոցիալիզմի պետական և հասարակական կյանքի իրավական հիմունքների ամրապնդման վճռական գործոն է և, որպես հիմնական օրենք, որոշում է սովետական պետության իրավական կարգավորման ուղղվածությունը, իրավական աշխատանքի գլխավոր ուղղությունները։ Սա վերաբերում է պետական և հասարակական բոլոր կազմակերպություններին, իհարկե, նաև՝ իրավապահպան մարմինների գործունեությանը։ ՍՍՀՄ սահմանադրության 4-րդ հոդվածում ասված է. «Սովետական պետությունը, նրա բոլոր մարմինները գործում են սոցիալիստական օրինականության հիման վրա, ապահովում իրավակարգի, հասարակության շահերի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը»։ Այստեղ էլ սահմանված է, որ պետական և հասարակական կազմակերպությունները, պաշտոնատար անձինք պետք է պահպանեն ՍՍՀՄ սահմանադրությունը, սովետական օրենքները։

Այսպիսով, սովետական պետության սահմանադրական կարևորագույն ֆունկցիաներից մեկը իրավակարգի պաշտպանությունն է։ Պետության այդ ֆունկցիան իրականացվում է ոչ միայն իրավապահպան մարմինների գործունեության մեջ, այլև հասարակական միջոցառումների այն համալիրում, որ ուղղված է իրավախախտումների և սոցիալիստական համակեցության կանոնների բոլոր տեսակի խախտումների կանխմանը։ Սակայն այստեղ հատուկ դեր ունեն հատկապես իրավապահպան մարմինները։ Սահմանադրությունը այդ մարմինների գործունեության (այդ թվում նաև կանխարգելիչ) իրավական բազան է։ Հենց այդ աղերսով էլ կարելի է խոսել իրավապահպան մարմինների գործողությունների միասնության, կոորդինացման և փոխգործողության սահմանադրական հիմունքների մասին։

ՍՍՀՄ սահմանադրությունը որպես պետության հիմնական օրենք կարգավորում է իրավապահպան մարմինների միջև նրանց ֆունկցիաների, այդ թվում նաև կանխարգելիչ ֆունկցիաների իրականացման պրոցեսում առա-

ջացած գլխավոր հարաբերությունները։ Այդ տեսակետից ՍՍՀՄ սահմանադրությունը գերագույն ուժ ունի։ Այդ նույն տեսակետից էլ այն իրավապահպան մարմինների համար սկզբունքային քաղաքական-իրավական փաստաթուղթ է։ ՍՍՀՄ սահմանադրության մեջ են սահմանված կուսակցության և պետության քաղաքականության իրավական հիմունքները, նրա հիմնական ուղղություններն ու սկզբունքները, որոնք, մասնավորապես, վերաբերում են իրավապահպան մարմինների գործունեությանը, նրանց գործողությունների միասնությանը, կոորդինացմանը և փոխգործողությանը։ Սահմանադրական կարգավորումը հասարակական պրոցեսների և երևույթների, այդ թվում նաև իրավապահպան մարմինների կանխարգելիչ գործունեության հետ կապված երևույթների վրա պետական ներգործության միջոց է։ Սահմանադրությունը, այսպիսով, որպես հիմնական օրենք, կայուն կերպով կարգավորում է նշված մարմինների միջև առաջացած հարաբերությունները։ Միաժամանակ ՍՍՀՄ սահմանադրությունը պետական և հասարակական բոլոր, այդ թվում նաև իրավապահպան կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ընթացիկ օրենսդրության բազան է։ «Պետական և հասարակական կազմակերպությունները, պաշտոնատար անձինք,— ասված է սահմանադրության 4-րդ հոդվածում,— պարտավոր են պահպանել ՍՍՀՄ սահմանադրությունը և սովետական օրենքները»։ Սահմանադրությունը սոցիալիստական պետության ամբողջ իրավական համակարգի հիմքն է։ Դա բացատրվում է ՍՍՀՄ սահմանադրության դերով և նրա կողմից լուծվող հարցերի շրջանակով[1]։ Իսկ իրավապահպան մարմինների գործունեության հարցերը լուծվում են առաջին հերթին ըստ սահմանադրության պահանջների, քանի որ պետական ամեն մի մարմնի ամեն մի գործունեություն իրագործվում է ՍՍՀՄ սահմանադրության ներգործությամբ և դրան համապատասխան։

Իրավապահպան մարմինների գործունեության ուղղություններից շատերը բխում են սահմանադրական այս կամ այն դրույթի իմաստից։ Մի դեպքում սահմանադրությունը հղում է արդեն գործող օրենքները, մյուս դեպքում՝ այն օրենքները, որոնք դեռ նոր պետք է ընդունվեն, քանի որ դա ելնում է սահմանադրական համապատասխան նորմերի իմաստից։ Այս դեպքերից յուրաքանչյուրը որոշում է իրավապահպան մարմինների գործունեության հիմնական գիծը, սահմանում, մասնավորապես, հակահասարակական վարքագծի կանխարգելման հետ կապված նրանց գործողությունների միասնության գլխավոր պահանջը։

Իրավապահպան մարմինների կանխարգելիչ գործունեության ելակետը ՍՍՀՄ սահմանադրության այն դրույթներն են, որոնց համաձայն պետությունը և նրա բոլոր մարմինները ապահովում են իրավակարգի պաշտպանությունը (4-րդ. հոդվ.)։ Այստեղ սահմանադրությունը ենթադրում է բոլոր պետական մարմինները, հատկապես չառանձնացնելով դրանցից որևէ մեկը։ Սակայն սահմանադրության իմաստից երևում է, որ դա առաջին հերթին վերաբերում է իրավապահպան մարմիններին։ Տվյալ դեպքում չի կարելի չտեսնել այդ մարմինների գործողությունների միասնության սահմանադրական պահանջները։ Նույնպիսի պահանջ է նշված նաև սահմանադրության 57-րդ հոդվածում։ «Քաղաքացիների անձի հարգումը, նրանց իրավունքների և ազատությունների պահպանումը բոլոր պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և պաշտոնատար անձանց պարտականությունն է»։ Իրավապահպան մարմինները, ինչպես նաև պետական բոլոր մյուս մարմինները իրավակարգի պահպանումը ապահովելուն, քաղաքացիների իրավունքները և ազատությունները պահպանելուն, իրավախախտումները կանխելուն ուղղված գործողության մեջ հենվում են սահմանադրականորեն ձևակերպված դրույթի վրա։ Սահմանադրության 27-րդ հոդվածում նշված է. «Պետությունը հոգ է տանում հոգևոր

---

[1] Տե՛ս Ю. А. Тихомиров, Проблемы теории социалистической конституции («Советское государство и право», 1978, № 2, с. 5,8).

արժեքները պահպանելու, բազմապատկելու և դրանք սովետական մարդկանց բարոյական ու գեղագիտական դաստիարակության, նրանց կուլտուրական մակարդակի բարձրացման համար լայնորեն օգտագործելու մասին»։ Հենց այդ դրույթի նշանակությունից էլ բխում է կանխարգելման դաստիարակչական ֆունկցիայի իրականացման անհրաժեշտությունը։ Ակներև է, որ իրավապահման մարմինների գործունեության մեջ գլխավորը հենց կանխարգելումն է, որի միջոցն է բարոյական դաստիարակությունը[2]։ Դա որոշում է նաև իրավապահման մարմինների կանխարգելիչ գործողությունների միասնությունը, որի հասարակական զարգացմամբ ընդլայնվում է նրա ներգործության սոցիալական սահմանը։

Անկասկած, իրավախախտումների կանխարգելման, իրավակարգի և սոցիալիստական օրինականության ամրապնդման հարցերը մեկուսացված, ինքնաբավ, միայն իրավապահման մարմինների ֆունկցիաների շրջանակներում շրջափակված պրոբլեմներ չեն. դրանք կապված են սոցիալիստական հասարակարգի կեցության բոլոր կողմերի հետ, և այդ կապի ըմբռնումը չափազանց կարևոր հանգամանք է[3]։ Իհարկե, «զարգացած սոցիալիզմի պայմաններում իրավախախտումների դեմ պայքարն ինքնանպատակ չէ. դա սոցիալիստական բարոյականության հաստատման խնդրի լուծման, ներդաշնակորեն զարգացած, անցյալի մնացուկներից ազատ, դաղափարապես հաստատուն, նոր հասարակարգի ակտիվ կառուցողի ձևավորման միջոցներից մեկն է»[4]։ Իրավախախտումների կանխարգելումը, այսպիսով, հնարավոր չէ առանց դաստիարակման։ Պատահական չէ, որ գիտնականները խնդրո առարկա ոլորտում հատկապես առանձնացնում են բարոյական կանխարգելումը[5]։ Անդրադառնալով իրավախախտումների կանխարգելման և իրավակարգի ապահովման խնդրին, նրանք հատուկ ուշադրություն են դարձնում դաստիարակման ֆունկցիաներին[6]։

Իրավապահման մարմինների կանխարգելիչ գործունեությունը ունի բարդ կառուցվածք և հայտնի յուրահատկություն, եթե նկատի ունենանք մանավանդ նրա կանխարգելիչ ներազդեցությունը հասարակական կյանքի առանձին ոլորտների վրա։ Յուրահատկությունը, առաջին հերթին, կանխորոշված է իրավապահման մարմինների՝ նման ներգործության բովանդակությունը կազմող հասարակական հարաբերությունների բնույթով, այդ մարմինների միջև կանխարգելման իրականացման պրոցեսում առաջացած հարաբերությունների կարգավորման հատուկ մեթոդներով, մի կողմից, այդ մարմիններից յուրաքանչյուրի ինքնուրույնությամբ, մյուս կողմից՝ դրանց փոխկապվածությամբ, նպատակների ու խնդիրների միասնությամբ և, վերջապես, կանխարգելիչ ներգործության օբյեկտի յուրահատկությամբ։ Այդ կապակցությամբ սահմանադրական կարգավորումը տվյալ ոլորտում հատուկ արդիականություն է ստանում։ Կարծում ենք, որ տվյալ դեպքում, սահմանադրական կարգավորման նորմատիվությունը պետք է որոշվի սահմանադրական օրենսդրության դրույթների բնույթով։ Մասնավորապես, եթե կոնկրետ խոսենք իրավապահ-

---

[2] Н. А. Щелоков, По законам гуманизма («Советская милиция», 1977, с. 5—6).

[3] П. Н. Федосеев, Социалистический образ жизни—великое завоевание социализма («XXV съезд КПСС; Проблемы социалистического образа жизни и укрепления правопорядка», М., 1977, с. 23).

[4] Ю. М. Чурбанов, Повышать эффективность борьбы с антиподами коммунистической нравственности («Коммунистическая нравственность и правопорядок». По материалам научно-практической конференции, М., 1979, с. 9).

[5] К. Е. Игошев, Социальный контроль и профилактика преступлений. Горький, 1976, с. 36.

[6] Г. А Аванесов, Профилактический потенциал воспитательной функции трудового коллектива («Профилактика правонарушений», вып. 7, М., 1978, с. 51—57).

պան մարմինների ոչ միայն կանխարգելիչ գործունեության, այլև մի կողմից, այդ մարմինների, իսկ մյուս կողմից նրանց և մյուս մարմինների ու կազմակերպությունների միջև գործողությունների միասնության, կոորդինացման և փոխգործողության մասին, ապա դժվար չէ նկատել, որ սահմանադրական սկզբունքների նորմատիվությունը, որը կազմում է ՍՍՀՄ սահմանադրության անբաժանելի բովանդակությունը, պայմանավորված է նրանով, որ այդ սկզբունքները սերտորեն կապված են սահմանադրական և այլ հասարակական հարաբերությունների սահմանադրական կարգավորման հետ, ուղղատու ազդեցություն են գործում պետության ամբողջ իրավական համակարգի վրա։ Այդ իրավական սկզբունքներով «իրենց գործունեության մեջ պետք է ղեկավարվեն բոլոր իրավաստեղծագործ, իրավակիրառիչ և իրավապահական մարմինները, բոլոր քաղաքացիները, պաշտոնատար անձինք և հասարակական կազմակերպությունները»[7]։ Այս դեպքում իրավապահական մարմինների գործունեությունը (այդ թվում նաև կանխարգելիչ) կարգավորվում է, առաջին հերթին, հատկապես սահմանադրական օրենսդրության մակարդակով[8]։

ՍՍՀՄ սահմանադրության մեջ սոցիալիստական օրինականության ամրապնդումը, որպես հասարակական կյանքի հիմնական սկզբունք, առաջ է բերում իրավապահական մարմինների՝ դատարանի, դատախազության, միլիցիայի գործունեության հետ կապված մի շարք խնդիրներ. այդ խնդիրներից գլխավորը իրավակարգի խախտումների դեմ տարվող պայքարի արդյունավետության բարձրացումն է, քաղաքացիների օրինական շահերի պահպանումը[9]։ Բայց իրավապահական մարմինները, գործելով միասնորեն և համագործակցված, ապահովելով քաղաքացիների օրինական շահերի պահպանումը, ելնում են նաև ՍՍՀՄ սահմանադրության մեջ որոշակիորեն ձևակերպված այն դրույթից, ըստ որի՝ «Իրավունքների և ազատությունների իրականացումը անբաժանելի է քաղաքացու կողմից իր պարտականությունների կատարումից» (59-րդ հոդվ.)։ Նշված մարմինների կանխարգելիչ գործունեության ելման դիրքը, երբ լուծվում են նրանց գործողությունների միասնության, կոորդինացման և փոխգործողության հարցերը, այն է, որ «ՍՍՀՄ քաղաքացին պարտավոր է պահպանել ՍՍՀՄ սահմանադրությունը և սովետական օրենքները, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները» (59-րդ հոդվ.), բարեխղճորեն աշխատել, «պահպանել և ամրապնդել սոցիալիստական սեփականությունը», «պայքարել պետական և հանրային ունեցվածքի հափշտակումների և շռայլումների դեմ, հոգատարությամբ վերաբերվել ժողովրդական բարիքներին» (61-րդ հոդվ.)։

Քննարկվող հարցերի տեսանկյունից հատուկ նշանակություն են ստանում ՍՍՀՄ սահմանադրության 65-րդ հոդվածի դրույթները. «ՍՍՀՄ քաղաքացին պարտավոր է հարգել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, անհաշտ լինել հակահասարակական արարքների նկատմամբ, ըստ ամենայնի աջակցել հասարակական կարգի պահպանմանը»։ Տվյալ սահմանադրական դրույթները չպետք է տրոհվեն մի մասը՝ իրավապահական այս մարմնի, մյուս մասը՝ մի ուրիշ մարմնի համար։ Սահմանադրական այս դրույթները վերաբերում են բոլոր իրավապահական մարմիններին։ Հենց դրանք էլ որոշում են նրանց գործողությունների միասնության սահմանադրական հիմունքները՝ իրավախախտումների կանխարգելման իրականացման, սոցիալիստական օրինա-

---

[7] О. В. Смирнов, Соотношение норм и принципов в советском праве («Советское государство и право», 1977, № 2); Л. А. Морозова, Конституционное регулирование общественных отношений в СССР («Советское государство и право», 1980, № 7, с. 21—22).

[8] Н. А. Щелоков, Развитие научных основ укрепления социалистической законности и правопорядка («Советское государство и право», 1977, № 11, с. 30, 34).

[9] В. Ч. Кудрявцев, Советская юридическая наука; актуальные проблемы («Вопросы философии», 1980, № 9, с. 28).

կանության պահպանման և սոցիալիստական իրավակարգի ապահովման իմաստով։

Իրավապահպան մարմինների ամբողջ պրակտիկ գործունեությունը կառուցված է ՍՍՀՄ սահմանադրության սկզբունքների և նորմերի հիման վրա։ Այդ պատճառով էլ, ինչպես նշել է Լ. Ի. Բրեժնևը, «սահմանադրության ամեն մի հոդված, նրա ամեն մի դրույթ պետք է ամենուրեք լիովին մտնի պետական բոլոր մարմինների, բոլոր պաշտոնատար անձանց, բոլոր սովետական քաղաքացիների ամենօրյա գործունեության կենդանի պրակտիկայի մեջ»[10]։

ՍՍՀՄ սահմանադրությունը կարգավորում է հասարակական հարաբերությունների լայն շրջան, այդ թվում նաև այնպիսի հարաբերություններ, որոնք կապված են իրավապահպան մարմինների կանխարգելիչ գործունեության, նրանց գործողությունների միասնության, կոորդինացման և փոխգործողության հետ։ Կարելի է ասել, որ սահմանադրությունը գործող իրավունք է, ուստի նրա նորմերի իրացումը իրավապահպան մարմինների գործունեության համար հիմնական ելակետային պրոբլեմ է։ Սահմանադրական նորմերը ոչ միայն սովետական օրենսդրություն են[11], այլև իրենց գործունեությունը այդ օրենսդրությանը համապատասխան իրականացնող պետական մարմինների (այդ թվում և կանխարգելիչ) գործունեության միջուկը։ Սահմանադրական նորմերի կիրառման, դրանց զարգացման կապակցությամբ էլ հենց, հաշվի առնելով, մասնավորապես, դրանց կանխարգելիչ գործունեության յուրահատկությունը, առաջանում են իրավակարգի պահպանման պետական մարմինների ակտիվ փոխգործողության նոր ձևեր[12]։ ՍՍՀՄ սահմանադրությունը նպաստում է այդ մարմինների գործունեության միասնությանը, երբ խոսքը վերաբերում է կանխարգելիչ գործունեությանը և երբ առաջանում են կոորդինացման և փոխգործողության պրոբլեմներ։ Այդ դեպքում ապահովվում են օրինականության ապահովման, իրավակարգի պահպանման, սոցիալիստական համակեցության կանոնների խախտումների կանխարգելման հատուկ սահմանադրական երաշխիքներ։ ՍՍՀՄ սահմանադրությունը երաշխավորում է նաև իրավապահպան մարմինների գործողությունների միասնությունը։ Այստեղից էլ բխում են կոորդինացման և փոխգործողության սահմանադրական պահանջները այդ մարմինների նկատմամբ։ Սահմանադրական պահանջները, իրավախախտումների կանխարգելման գործում իրավապահպան մարմինների դերի բարձրացումը, այդ մարմինների գործողությունների միասնության ապահովումը առաջ են բերում նրանց (այդ մարմինների) պատասխանատվությունը սոցիալիստական օրինականության պահպանման նկատմամբ։ Տվյալ դեպքում նկատի է առնվում օրինականության միասնությունը բոլորի՝ միլիցիայի, դատախազության, դատարանների, արդարադատության մարմինների համար։ Այստեղ անթույլատրելի է խոսել յուրաքանչյուր իրավապահպան մարմնի համար առանձին օրինականության մասին։ Բոլոր իրավապահպան մարմինների համար օրինականությունը անբաժանելի է և միասնական։ Հատկապես այդ կարևոր է նկատի ունենալ այն դեպքում, երբ հարցը վերաբերում է նշված մարմինների գործողությունների միասնության սահմանադրական հիմունքներին, դրանց կոորդինացմանը և փոխգործողությանը[13]։ Սոցիալիստական օրինականությունը վերաբերում է իրավապահպան մարմինների պրակտիկայի համ-

---

10 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. VI, Երևան, 1979, էջ 690։

11 Конституция развитого социализма (передовая статья), («Советское государство и право», 1977, № 9, с. 3,6). В. А. Пертцик, Л. П. Шмайлова, Реализация конституционных норм («Советское государство и право», 1979, № 5, с. 3,6 8—9).

12 К. Варламов, А. Косицын, Н. Миголатьев, Народ — творец социалистического правопорядка («Коммунист», 1977, № 12, с. 67).

13 Р. Руденко, На страже социалистической законности («Коммунист», 1977, № 10, с. 60—61); В. И. Ремнев, Ленинские основы законности в государственном управлении («Советское государство и право», 1977, № 10, с. 20—21).

ընդհանուր կատեգորիաներին։ Այն ծառայում է որպես այդ մարմինների աշխատանքի կազմակերպման յուրահատուկ գործիք՝ ապահովելով իրավունքի նորմաների խախտումների դեմ նրանց պայքարի օրգանական միասնությունը։ Հենց այդ հանգամանքն է նշում Ն. Ա. Շչոլոկովը, գրելով. «ՍՍՀՄ սահմանադրության մեջ, որպես երկրի պետական կյանքի հիմնական սկզբունքներից մեկը, պարզորոշ կերպով ամրապնդվում է սոցիալիստական օրինականության սկզբունքը»[14]։

Օրինականությունը իրավակարգի պահպանման ուղղությամբ իրավապահպան մարմինների գործունեության կենտրոնական սկզբունքն է։ Այդ սկզբունքն ունի մի շարք տեսանկյուններ, որոնք կապված են տվյալ մարմինների կողմից իրականացվող կանխարգելման ֆունկցիայի հետ և դրսևորվում են երկու հիմնական ուղղություններով. առաջին՝ քաղաքացիների իրավունքների խստագույն պահպանում, իրավապահպան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից որևէ կամայականության ցուցաբերման արգելում, երկրորդ՝ քաղաքացիների կողմից սովետական օրենքների, սոցիալիստական համակեցության կանոնների և առհասարակ իրավակարգի խստագույն պահպանում։ Հայտնի է, որ այս երկու ուղղությունները սերտորեն կապված են միմյանց հետ։ Իրավապահպան մարմինների գործունեության մեջ իրականացվող օրինականությունը (դրա պահպանումը) դրականորեն է ներգործում քաղաքացիների վարքագծի վրա։ Իսկ քաղաքացիների կողմից վարքագծի նորմերի պահպանումը ամրապնդում է սոցիալիստական իրավակարգը՝ ամբողջությամբ վերցրած[15]։ Դրանով է ապահովվում օրինականության սկզբունքի իրականացման լիարժեքությունը։ Այսպիսով, իրավակարգի պահպանման անպայմանականության սկզբունքը օրինականությունն է, որը, որպես սահմանադրական սկզբունք, ընկած է իրավապահպան մարմինների կանխարգելիչ գործունեության հիմքում[16], ապահովում է այդ մարմինների գործողությունների միասնությունը՝ նպաստելով դրանց կոորդինացմանը և փոխգործողությանը։

Իրավախախտումների կանխարգելումն իրականացնելու գործում իրավապահպան մարմինների գործողությունների միասնության ապահովումը իրավական լուրջ հիմքի կարիք ունի։ Այդպիսի հիմքի միջուկը մեր երկրում, ինչպես իրավացիորեն շեշտվում է գրականության մեջ, ՍՍՀՄ սահմանադրությունն է։ Ավելին, մեր կողմից քննարկվող ոլորտում սահմանադրությունը նաև օրենսդրական աշխատանքի հետագա զարգացման բազա է։ Սահմանադրությունը կանխարգելում իրականացնող իրավապահպան մարմինների միջև առաջացած հարաբերությունների կարևորագույն կարգավորիչն է։ «ՍՍՀՄ սահմանադրությունը, մարմնավորելով և ամրապնդելով զարգացած սոցիալիզմի նվաճումները, էապես ընդլայնել է սոցիալիստական կանխարգելման ոլորտում ստեղծվող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման սահմանները։ Այն երաշխավորում է շեղվող (այդ թվում հակահասարակական, հակաիրավական) վարքագծի կանխման միջոցառումների լայն սիստեմ։ Առանց ՍՍՀՄ սահմանադրության սկզբունքների և նորմերի հաշվառման (և իրականացման) հնարավոր չէ խոսել կանխարգելիչ գործունեության իրավական կարգավորման մասին»[17]։ Դա վերաբերում է, մասնավորապես, և այնպիսի հարցի, ինչպիսին են իրավախախտումների կանխման իրա-

---

[14] Н. А. Щелоков, Развитие научных основ укрепления социалистической законности и правопорядка («Советское государство и право», 1977, № 11, с. 29).

[15] В. Н. Кудрявцев, Право и поведение, М., 1978, с. 118. В. Н. Гаршенев, Теория социалистической законности в свете Конституции СССР 1977 г. («Советское государство и право», 1979, № 11, с. 14).

[16] В. Н. Кудрявцев, Конституция общенародного государства («Советское государство и право», 1977, № 11, с. 15).

[17] Г. Н. Аванесов, Криминология и социальная профилактика, М., 1980, с. 481, տե՛ս նաև՝ К. Е. Игошев, В. С. Устинов, Введение в курс профилактики правонарушений, Горький, 1977, с. 48—49.

կանացման գործում իրավապահական մարմինների գործողությունների կոորդինացումը և փոխգործողությունը։ Կանխարգելիչ գործունեության, նրա կոորդինացման և փոխգործողության բնագավառում սահմանադրական սկզբունքների ու նորմերի իրականացումը իրենից ներկայացնում է սոցիալական և քաղաքական պրոբլեմ։

Մենք ելնում ենք իրավաբանական գրականության մեջ պարզորոշ ձևակերպված այն դրույթներից, որոնց համաձայն յուրաքանչյուր առանձին նորմատիվ ակտ ինքնըստինքյան չի գործում, այլ՝ դասակարգային այն սկզբունքների և նպատակների բազայի վրա, որոնք ամրապնդված են ՍՍՀՄ սահմանադրությամբ և նրա հիման վրա հրապարակված ՍՍՀ Միության ու միութենական հանրապետությունների օրենսդրության հիմունքներով և օրենսգրքերով։ Նորմատիվ ակտը առանձնացված է և ինքնուրույն է միայն պայմանականորեն. այն ներգրավվում է օրենսդրության ընդհանուր համակարգի մեջ։ Ուրեմն, իրավախախտումների կանխարգելումը կազմակերպելիս և իրականացնելիս բոլոր դեպքերում անհրաժեշտ է ղեկավարվել ՍՍՀՄ սահմանադրության համապատասխան դրույթներով։

Իրավապահական մարմինների միջև նրանց կողմից կանխարգելիչ գործունեություն իրականացնելու կապակցությամբ առաջացած հարաբերությունների նորմատիվ կարգավորումը կրում է սիստեմային բնույթ և ներառում է իրավական նորմերի փոխադարձաբար կապակցված ամբողջությունը։ Իրավապահական մարմինների համակարգը ոչ միայն այդ մարմինների ամբողջությունն է, այլև նրանց միջև եղած հարաբերությունների կարգավորված համակարգն է։ Իսկ կարգավորվածությունը, այդ հարաբերությունների իրավական կանոնավորվածությունը իրավապահական մարմինների սիստեմի հիմնական հատկությունն են։ Այս տեսակետից տվյալ համակարգը ամբողջական է, և նրա բաղադրամասերը (իրավապահական մարմինները) սերտորեն կապված են այն իմաստով, որ այդ մարմիններից ոչ մեկը չի կարող արդյունավետ գործել տվյալ համակարգի մյուս մարմիններից կտրված։ Հենց այս իրողությամբ է թելադրվում կոորդինացման և փոխգործողության անհրաժեշտությունը, մի բան, որը, սակայն, անհնարին է առանց նորմատիվ կարգավորման։

Կանխարգելիչ գործունեության իրավական կարգավորումը իրականացվում է երկու հիմնական ուղղություններով. առաջինը դա իրավունքի միջոցով սոցիալական զանազան այն գործոնների վրա ազդելն է, որոնք նպաստում են հանցագործությունների կատարմանը՝ կրիմինոգեն պայմանների վերացումը կամ պակասեցումը, անբարենպաստ (կոնֆլիկտային) իրադրությունների փոփոխումը, ինչպես նաև հակակրիմինոգեն մթնոլորտի ուժեղացում կամ ստեղծում։ Երկրորդ՝ իր նշանակությամբ, այսպես ասած, դատավարական ուղղության էությունը նախազգուշական գործունեության իրականացման, պատշաճ կարգուկանոնի հաստատման և կանխարգելիչ կոնկրետ միջոցառումների իրավական կարգավորման մեջ է[18]։ Վերջին հանգամանքը վերաբերում է պետական և հասարակական կազմակերպությունների հենց կանխարգելիչ գործունեությանը, այդ թվում նաև (գուցե և հատկապես) իրավապահական մարմիններին։ Այստեղ արդեն կարելի է խոսել որոշակի իրավական վերնաշենքի մասին, որը ամփոփում է ոչ միայն իրավունքի նորմերի համակարգը, այլև իրավահարաբերությունները, իրավական հիմնարկներն ու իրավունքի ստեղծման և կիրառման ուղղությամբ տարվող նրանց գործունեությունը[19]։ Արդ, ինչպե՞ս գնահատել իրավապահական մարմինների կանխարգելիչ գործունեության իրավական կարգավորումը։ Պետք է նկատի ունենալ, որ իրավունքի հիմնական ֆունկցիաներից մեկը տվյալ մարմինների միջև առաջացած հարաբերությունների կարգավորումն է։ Այդ կարգավորումը իրա-

---

[18] А. Б. Сахаров, Правовое обеспечение предупреждения преступлений («Советское государство и право», 1975, № 11, с. 84); «Теоретические основы предупреждения преступности», М., 1977, с. 99.

[19] В. Н. Кудрявцев, Право и поведение, М., 1978, с. 23.

վապահպան մարմինների կանխարգելիչ գործունեության կառավարման բաղադրամասն է[20]։ Տվյալ հարցը, սակայն, հատուկ ուսումնասիրության խնդիր է։

Իրավունքը և իրավական կարգավորումը նպաստում են այն բանին, որպեսզի ապահովվեն իրավապահպան մարմինների գործնական համագործակցությունը, նրանց փոխօգնությունը և համերաշխությունը։ Բայց չի կարելի մտածել, որ այդ մարմինների փոխգործողության հակասական կողմերի կարգավորումը ընկած է իրավունքի սահմաններից դուրս։ Իրավունքը կարգավորում է նաև փոխգործողության հակասական (նույնիսկ կոնֆլիկտային) ձևերը, պահելով դրանք որոշակի շրջանակների մեջ։ Իրավունքի նորմերից շատերը ուղղված են կոնֆլիկտային փոխհարաբերությունների կանխմանը, կամ տեղաշարժին, քանի որ դրանք առաջացել են գործնական շփումների, գործնական փոխգործողության մակարդակով։ Իրավական կարգավորման հիմնական մեթոդը տվյալ դեպքում իրավապահպան մարմինները համապատասխան իրավունքներով և պարտականություններով օժտելն է։ Դա, եթե կարելի է այդպես ասել, իրավապահպան մարմինների փոխգործողությունը նրանց կանխարգելիչ գործունեության ընթացքում գնում է որոշակի իրավական շրջանակների մեջ, կայունացնում և կարգավորում է այն, պաշտպանում գործնական փոխհարաբերությունների համար վտանգավոր հակասություններից և կոնֆլիկտներից։

Իրավապահպան մարմիններին, որոշ իմաստով, կարելի է համախոհներ համարել, նկատի ունենալով նրանց ընդհանուր նպատակներն ու խնդիրները և այն ընդհանուր գործը, որը մերձեցնում է նրանց։ Այդ պատճառով էլ թույլատրելի է խոսել ոչ միայն փոխգործողության, այլև փոխըմբռնման մասին։ Սակայն դրա համար իրավունք չի պահանջվում։ Փոխըմբռնման նպատակն է կարգավորել հատկապես փոխգործողությունը, իսկ մեզ հետաքրքրող տեսակետից՝ իրավապահպան մարմինների կանխարգելիչ գործունեության փոխգործողությունը։

КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВЫ ЕДИНСТВА ДЕЙСТВИЙ, КООРДИНАЦИИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ ПРАВООХРАНИТЕЛЬНЫХ ОРГАНОВ И ПРОБЛЕМА ПРОФИЛАКТИКИ

ВЛАДИМИР ДАРБИНЯН

Резюме

В Конституции СССР—Основном законе государства—закреплены главные отношения, возникающие между правоохранительными органами в процессе реализации ими их функций, в том числе и профилактических. Конституция СССР обладает высшей юридической силой. В этом плане она для правоохранительных органов является политико-правовым документом. Именно в Конституции СССР установлены правовые основы политики партии и государства, основные направления и принципы, касающиеся, в частности, деятельности правоохранительных органов, единства их действий, координации и взаимодействия. Конституционное регулирование есть способ государственного воздействия на общественные процессы и явления, в том числе и на такие, которые связаны с профилактической деятельностью правоохранительных органов. Конституция, таким образом, постоянно регулирует отношения, возникающие между указанными органами именно как Основной закон.

---

[20] Г. Г. Зуйков, Предмет, задачи и система курса «Основы научной организации управления и труда в органах внутренних дел», М., 1971, с. 14.